Վարչական գործ թիվ ՎԴ/2861/05/15

Վ Ճ Ի Ռ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

22.12.2015թ. քաղ. Երևան

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը

նախագահությամբ՝ դատավոր Արման Թովմասյանի
քարտուղարությամբ՝ Ռիմա Պետրոսյանի

մասնակցությամբ՝
հայցվորի ներկայացուցիչ՝ Գևորգ Հայրապետյանի
/անձնագիր՝ AN 0501047, տրվ. 05.06.2013թ. 013-ի կողմից,
հասցե՝ ք.Երևան, Դավիթաշեն 1-ին թաղ. 51 շ. բն. 56/
պատասխանողի ներկայացուցիչ՝ Հայկ Վարդանյանի
/աշխատանքային վկայական թիվ 71611/

Դռնբաց դատական նիստում քննելով վարչական գործն ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության՝ վարչական մարմնի գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Նկարագրական մաս.

29.06.2015 թվականին «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Հայցվոր) հայցադիմում է ներկայացվել ՀՀ վարչական դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Պատասխանող)՝ վարչական մարմնի գործողությունները կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու և տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին։

Դիմելով Դատարան Հայցվորի ներկայացուցիչը հայտնել է, որ Հայցվորը (այսուհետ նաև՝ Վստահորդ) 2015թ. մայիսի 22-ին տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել է ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանություն ծառայությանը խնդրելով տեղեկություններ ճանապարհային տեսախցիկների և լուսանկարահանող-արագաչափ սարքերի վերաբերյալ: ՃՈ-ն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետներում հարցմանը չի պատասխանել: Սույն հայցով խնդրվում է ոչ իրավաչափ ճանաչել օրենքով սահմանված ժամկետում ԻԱԿ-ին տեղեկություն չտրամադրելու անգործությունը (ԻԱԿ-ի հարցմանը չպատասխանելը) և պարտավորեցնել ՃՈ-ին տրամադրել պահանջվող տեղեկությունները: 2015 թվականի մայիսի 22-ին Հայցվորը փոստային ծառայությամբ ուղարկված տեղեկություն ստանալու թիվ 249-4 գրավոր հարցմամբ (այսուհետ՝ հարցում) դիմել է ՃՈ-ին:

Հարցմամբ ՃՈ-ից խնդրվել է տրամադրել հետևյալ տեղեկությունները.
- Ենթարկվում են արդյոք ճանապարհային տեսախցիկները և լուսանկարահանող-արագաչափ սարքերը փորձաքննության (ստուգվում է արդյոք դրանց սարքինությունը,
- Եթե այո, ապա ի՞նչ պարբերականությամբ,
Խնդրում են տրամադրել Երևան քաղաքում տեղադրված ճանապարհային տեսախցիկների և լուսանկարահանող-արագաչափ սարքերի ցանկը՝ նշելով յուրաքանչյուրի տեղադրման վայրը և վերջին փորձաքննության ժամանակը (երբ է վերջին անգամ ստուգվել տվյալ տեսախցիկը կամ սարքը):

Հարցումը ՃՈ ուղարկվել է պատվիրված նամակով՝ 2015թ.–ի մայիսի 22-ին:

ԻԱԿ-ը ՃՈ հարցման պատասխանը չի ստացել:

Որպես հայցի իրավական հիմքեր Հայցվորը վկայակոչել է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը, 27.1 հոդվածը, 31-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի 10-րդ հոդվածը, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին կետը, 3-րդ հոդվածի 4-րդ պարբերությունը, 9-րդ հոդվածի 7-րդ և 10-րդ կետերը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, 11-րդ հոդվածի 3-րդ կետը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետը, 71-րդ հոդվածը:

Նշել է, որ ՃՈ-ն Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ

օրենքում ամրագրված՝ տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքներն ապահովելու համար պարտավոր էր կատարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետով կամ նույն հոդվածի 10-րդ կետով սահմանված գործողություններից որևէ մեկը կամ նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ կետերով սահմանված գործողություններից որևէ մեկը« ընդ որում՝ Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված կարգով։

Սույն հայցով խոսքը գնում է հայցվող տեղեկատվությունն ըստ էության տրամադրելու մասին, երբ ըստ Օրենքի ՃՈ–ն պարտավոր էր Օրենքով սահմանված ժամկետում կամ տրամադրել հարցմամբ խնդրվող տեղեկությունները և փաստաթղթերի պատճենները, կամ հայցվող տեղեկությունները հրապարակված լինելու դեպքում տրամադրել տվյալ հրապարակման միջոցի« վայրի և ժամկետի մասին տեղեկությունը (հղում կատարել տեղեկատվության աղբյուրին)« կամ փնտրվող տեղեկությունը չունենալու կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս լինելու դեպքում գրավոր տեղեկացնել դիմողին« իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը (հղում կատարել տեղեկություն տնօրինող այլ մարմնի)։

Սույն հայցով խոսքը գնում է հայցվող տեղեկատվության տրամադրումը մերժելու մասին, երբ ըստ Օրենքի ՃՈ–ն պարտավոր էր Օրենքով սահմանված ժամկետում Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված հիմքերի առկայության դեպքում մերժել խնդրվող տեղեկությունները« կամ« եթե պահանջվող տեղեկության միայն մի մասն է պարունակում տվյալներ« որոնց տրամադրումը ենթակա է մերժման« ապա տեղեկություն տրամադրեր մնացած մասի վերաբերյալ« իսկ մնացած մասով մերժեր։ Ընդ որում« տեղեկատվության տրամադրումն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու դեպքում Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջով ՃՈ-ն պետք է ներկայացներ գրավոր մերժում՝ նշելով մերժման հիմքը (օրենքի համապատասխան նորմը), ինչպես նաև դրա բողոքարկման կարգը։

ՃՈ-ն չի կատարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետով կամ նույն հոդվածի 10-րդ կետով կամ նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կամ 2-րդ կետերով սահմանված գործողություններից որևէ մեկը՝ այն է« ԻԱԿ-ի գրավոր հարցմանն ի պատասխան Օրենքով սահմանված ժամկետում չի տրամադրել գրավոր պատասխան կամ գրավոր մերժում՝ դրսևորած անգործությամբ (գործողությամբ) խախտել է Օրենքի վերոնշյալ հոդվածների պահանջները, ուստի ՃՈ-ի անգործությունը (գործողությունը) ոչ իրավաչափ է։

ՃՈ-ի ԻԱԿ-ի կողմից տեղեկատվություն ստանալու հարցում ստանալուց հետո որևէ պատասխան չի տրամադրել՝ դրսևորած անգործությամբ (գործողությամբ) խախտել է

ԻԱԿ-ի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղեկատվության ազատության և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունքները։

Եթե Դատարանը պարզի, որ ՃՈ-ի կողմից ԻԱԿ-ի տեղեկատվություն ստանալու հարցմունը ստանալուց հետո «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում որևէ պատասխան չտրամադրելը ոչ իրավաչափ է, ապա գտնում են, որ արդարացի իրավունք ունեն դատարանից խնդրելու պարտավորեցնել ՃՈ-ին վերացնել այն հետևանքը« որը առաջացել է ՃՈ-ի ոչ իրավաչափ անգործության (գործողության) արդյունքում« այն է՝ ՃՈ-ի անգործության (գործողության) հետևանքով ԻԱԿ-ը չի ստացել այն տեղեկությունները« որոնք փնտրել է հարցմամբ։ Հետևաբար Դատարանից խնդրում են պարտավորեցնել ՃՈ-ին հնգօրյա ժամկետում տրամադրել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ 2015 թվականի մայիսի 22-ի թիվ 249-4 գրավոր հարցմամբ փնտրվող տեղեկատվությունը։

Ելնելով վերոգրյալից ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանություն ծառայության այն գործողությունները կամ անգործությունը, որով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում պատասխան չի տրվել ԻԱԿ-ի կողմից հարցմամբ խնդրվող տեղեկատվության վերաբերյալ։

Որպես հետևանքների վերացման ածանցյալ պահանջներ՝ խնդրել է վերացնել այն հետևանքը, որը առաջացել է ՃՈ-ի ոչ իրավաչափ գործողությունների կամ անգործության հետևանքով, այն է՝ պարտավորեցնել ՃՈ-ին հնգօրյա ժամկետում տրամադրել Ինֆորմացիայի ազատության կենտրոնի՝ 2015 թվականի մայիսի 22-ի թիվ 249-4 գրավոր հարցմամբ փնտրվող տեղեկատվությունը։

Հայցադիմումին կից ներկայացված միջնորդությամբ Հայցվորի ներկայացուցիչը խնդրել է ազատել պետական տուրքի վճարումից կամ հետաձգել պետական տուրքի վճարման ժամկետը՝ մինչև սույն գործով դատական ակտի կայացումը։ 06.07.2015 թվականին Դատարանը որոշում է կայացրել պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու և հայցադիմումը վարույթ ընդունելու մասին։

21.07.2015 թվականին Պատասխանողի ներկայացուցիչը Դատարան է ներկայացրել գրավոր առարկություն, որով հայտնել է հետևյալը.
Նախ անհրաժեշտ է պարզել ՃՈ-ն ընդհանարապես ունեցել է հնարավորություն պատասխանելու ԻԱԿ-ի գրությանը, թե ոչ, իսկ այդպիսի հնարավորությունը կարող է առաջանալ միայն այն պարագայում, երբ գրությունը ստացվի ՃՈ-ում, ուստի ԻԱԿ-ը

դատարանին է ներկայացրել ապացույց այն մասին, որ թիվ 249-4 գությունը 22.05.2015թ.–ին հանձնել փոստային ծառայությանը, սակայն որևէ ապացույց՝ փոստային հետադարձ ծանուցման անդորրագրի տեսքով, չի ներկայացրել դատարանին այն մասին: ՃՈ մուտքի մատյանի 22.05.2015թ.-ից մինչև 10.06.2015թ.-ն ուսումնասիրության արդյունքում ԻԱԿ-ի նշված գրությունը չի մուտքագվել, ուստի միանշանակ հիմնավոր է վկայակոչել ՎԴՕ 28-րդ հոդվածն այն է՝ «Կողմը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում եղած այն բոլոր ապացույցները« որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները», այն համատեքստում, որ ԻԱԿ-ն է պարտավոր ապացուցելու, որ ՃՈ-ն ունենալով սահմանված պարտավորությունը գրությունը ստանալու պարագայում պատասխանել իր գրությանը գրությամբ նշված տեղեկատվության պահանջի շրջանակներում և ժամկետում, չի ներկայացրել պատասխան: Պատասխանողի ներկայացուցիչը նշել է նաև, որ «Չափումների միասնականության ապահովման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի «Օրենսդրական չափագիտության պահանջները տարածվում են այն չափումների վրա, որոնց արդյունքներն օգտագործվում են՝ ճանապարհային երթևեկության վերահսկման», նույն օրենքի 2-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն՝ «չափման միջոց՝ չափում կատարելու համար նախատեսված սարք, որը կարող է կիրառվել առանձին կամ լրացուցիչ սարքերի հետ համատեղ», նորմի մեկնաբանությունից ակնհայտ է, որ ստուգաչափման ենթակա է միայն չափում կատարող սարքը, ուստի տեսախցիկները ենթակա չեն ստուգաչափման, քանի որ դրանք չեն իրականցնում չափում և միայն հանդիսանում են սարքավորում, որով իրականցվում է իրավախախտուների տեխնիկական միջոցի գործադրմամբ ամրագրում, համաձայն նույն օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «Չափման միջոցի ստուգաչափման պարբերականությունը սահմանվում է չափման միջոցի տեսակի հաստատման ժամանակ», իսկ համաձայն ՀՀ կառավարության 04.07.2012թ.-ի թիվ 882-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերի՝ «Հայաստանի Հանրապետությունում չափագիտության լիազոր մարմին է ճանաչվել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, Հայաստանի Հանրապետությունում չափագիտության ազգային մարմին ճանաչել «Չափագիտության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունը», իսկ կից ներկայացվող փաստաթղթերից ակնհայտ է դառնում նախ, որ դեռևս նախկինում քննված գործերի շրջանակներում վարչական դատարանին ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ՀՀ ներմուծվել և մինչ օրս շահագործվում է Multaradar SD580 մոդելի արագաչափ սարքեր, որոնց D ֆունկցիան անջատված է, իսկ սարքավորման հավելվածի համաձայն դրա ստուգաչափման պարբերականությունը սահամանվել է 1 տարի և այդ համատեքստում յուրաքանչյուր տեղադրված և շահագործվող արագաչափ ունի իր առանձին ստուգաչափման անհատական վկայականը:

Հավելել է նաև, որ Հայցվորի փնտրած տեղեկատվությունը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով տեղադրվում է

www.police.am կայքում և թարմացվում ամեն փոփոխության զուգահեռ, ուստի այն հասանելի է հանրությանը։

Ուստի այս ամենը ևս մեկ անգամ ակնհայտ է դարձնում այն հանգամանքը, որ ՃՈ կողմից Հայցվորի Դատարան ներկայացված գրությունը ստանալու պարագայում առանց վարանելու կարող էր սահմանված կարգով տեղեկատվություն փնտրողին տրամադրել այն կամ մատնանշել փնտրվող տեղեկտվության հասանելի ուղին։ Միաժամանակ հայտնել է, որ Հայցվորի 22.05.2015թ.–ի թիվ 249-4 գրությունը հասցեագրված է եղել ՃՈ պետ Ա. Գալստյանին, այն պարագայում, երբ առավել քան 2014թ.-ի նոյեմբեր ամսվանից ՃՈ պետն է հանդիսացել ոստիկանության գեներալ-մայոր Ա. Հարությունյանը, ինչի մասին ևս տեղեկատվություն է տարածված եղել տարբեր ԶԼՄ-ներով։

Միաժամանակ միջնորդել է ընդունել սույն առարկությունները որպես իր դատական նիստին հայտնելիք դիրքորոշում և նիստն անցկացնել իր բացակայությամբ։ 15.09.2015 թվականի նախնական դատական նիստի ժամանակ Հայցվորի ներկայացուցիչը հայտնեց, որ պնդում է միայն հիմնական պահանջը՝ ճանաչման հայցը։

12.10.2015 թվականի նախնական դատական նիստի ժամանակ Դատարանը գործը համարելով դատաքննությանը նախապատրաստված, որոշում է կայացրել դատաքննություն նշանակելու մասին։

10.12.2015 թվականի դատաքննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ձևով ծանուցված Պատասխանողը դատական նիստին չի ներկայացել, Դատարանը որոշում է կայացրել դատական նիստը կողմի բացակայությամբ անցկացնելու մասին։ 10.12.2015 թվականի դատաքննության ժամանակ Հայցվորի ներկայացուցիչը պնդեց ներկայացված հայցը։

10.12.2015 թվականի դատաքննության ժամանակ Դատարանը գործի դատաքննությունը համարելով ավարտված գործն ըստ էության լուծող դատական ակտի հրապարակման օր է հայտարարել 22.12.2015 թվականը։

II. Պատճառաբանական մաս.

Գնահատելով սույն գործով Դատարանին ներկայացված վերաբերելի և թույլատրելի ապացույցները՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությունների վրա հիմնված, ներքին համոզմամբ, լսելով կողմի դատաքննությամբ տրված բացատրությունները, Դատարանը հանգեց հետևության, որ հայցը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

Սույն վարչական գործի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. 22.05.2015 թվականին «Ինֆորմացիայի ազտության կենտրոն» ՀԿ իրավաբան Գևորգ Հայրապետյանը տեղեկություն ստանալու հարցում է ուղղել ՀՀ ճանապարհային ոստիկանության պետին, որով նշել է. «Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Ենթարկվում են արդյոք ճանապարհային տեսախցիկները և լուսանկարահանող-արագաչափ սարքերը փորձաքննության (ստուգվում է արդյոք դրանց սարքինությունը),
2. Եթե այո, ապա ինչ պարբերականությամբ,
3. Խնդրում ենք տրամադրել Երևան քաղաքում տեղադրված ճանապարհային տեսախցիկների և լուսանկարահանող-արագաչափ սարքերի ցանկը՝ նշելով յուրաքանչյուրի տեղադրման վայրը և վերջին փորձաքննության ժամանակը (երբ է վերջին անգամ ստուգվել տվյալ տեսախցիկը կամ սարքը)։

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում։ Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում։»։

2. Համաձայն «Հայփոստ» ՓԲԸ կողմից «Ինֆորմացիայի ազտության կենտրոն» ՀԿ նախագահ Շուշան Դոյդոյանին ուղղված պատասխան գրությամբ հայտնվել է, որ պատվիրված նամակ RR 178473553AM, հասցեագրված ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանություն ծառայությանը (ՃՈ), տեղակայված ՀՀ, ք. Երևան, Իսակովի փող. 9 հասցեում, «Հայփոստ» ՓԲԸ Երևանի թիվ 82 փոստային բաժանմունքում ստացվել է 25.05.2015 թվականին և նույն օրը հանձնվել է հասցեատիրոջը։

3. Համաձայն «Հայփոստ» ՓԲԸ կողմից տրված առաքանու ստացման մասին ստվյալների վերը նշված հարցումը 25.05.2015թվականին ստացվել է Պատասխանողի՝ Իսակովի 9 հասցեում։

4. 24.06.2015 թվականին «Ինֆորմացիայի ազտության կենտրոն» ՀԿ իրավաբան Գևորգ Հայրապետյանին ուղղված պատասխան գրությամբ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության պետի պաշտոնակատար Ե. Կարապետյանը հայտնել է. «1. Արագաչափ սարքերը և տեսախցիկները փորձաքննության չեն ենթարկվում։ ՀՀ-ում շահագործվող արագաչափ սարքերը ենթարկվել են ստուգաչափման և տրվել է համապատասխան ստուգաչափման մասին վկայական։

2. Արագաչափ սարքերը ստուգաչափվում են տարեկան մեկ անգամ պարբերականությամբ։

3. Երևան քաղաքում տեղադրված տեսախցիկների և արագաչափ սարքերի ցանկը տեղադրված է ՀՀ ոստիկանության police.am կայքէջում և պարբերաբար թարմացվում է։ Տեսախցիկների և արագաչափ սարքերի սարքինությունը ստուգվում է դրանց գործարկման, բնականոն գործառույթի ապահովման փաստի շրջանակներում՝ ըստ անհրաժեշտության ծագող պարբերականությամբ։»։

Սույն վարչական գործով կիրառման ենթակա օրենքնսդրությունը. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, ՀՀ Սահմանադրություն, ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք։

Դատարանի իրավական վերլուծությունները.
Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք։»։

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք։»։

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք։»։

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝ 1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի

Հանրապետության Սահմանադրությամբ (այսուհետ՝ Սահմանադրություն), միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝
ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,
բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.
2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.
3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության։»։

Սույն վարչական գործով հայցվորը Դատարան ներկայացված հայցադիմումով խնդրել է ոչ իրավաչափ ճանաչել Պատասխանողի գործողությունը (անգործությունը) սահմանված ժամկետում տեղեկատվություն չտրամադրելու հետ։
ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ «... Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից։...»։

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքը կարգավորում է տեղեկատվության ազատության հետ կապված հարաբերությունները, սահմանում է տեղեկատվության ապահովման բնագավառում տեղեկատվություն տնօրինողների իրավասությունը, ինչպես նաև տեղեկություններ ստանալու կարգը, ձևերը և պայմանները, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենքի գործողությունը տարածվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպությունների, ինչպես նաեւ հանրային նշանակության կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց վրա։

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ տեղեկություն է՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալները՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ)։

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով

հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը։»։

Նույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանում են տեղեկատվության ազատության սահմանափակումները և այն դեպքերը երբ տեղեկատվություն տնօրինողը կարող է մերժել տեղեկատվության տրամադրումը։

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Գրավոր հարցման մեջ նշվում է դիմողի անունը, ազգանունը, քաղաքացիությունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության գտնվելու վայրը։ Գրավոր հարցումը պետք է ստորագրված լինի (իրավաբանական անձի դեպքում՝ դրա անվանումը, գտնվելու վայրը)։»։

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ «7. Գրավոր հարցման պատասխանը տրվում է հետևյալ ժամկետներում.

1) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված չէ, ապա դրա պատճենը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
2) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը հրապարակված է, ապա տվյալ հրապարակման միջոցի, վայրի և ժամկետի մասին տեղեկությունը դիմողին է տրվում հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում.
3) եթե գրավոր հարցման մեջ նշված տեղեկությունը տրամադրելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանք, ապա այդ տեղեկությունը դիմողին է տրվում դիմումն ստանալուց հետո՝ 30-օրյա ժամկետում, որի մասին հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, գրավոր տեղեկացվում է դիմողին՝ նշելով հետաձգման պատճառները և տեղեկությունը տրամադրելու վերջնական ժամկետը։»։

Սույն վարչական գործի փաստերի համաձայն՝ 22.05.2015 թվականին «Ինֆորմացիայի ազտության կենտրոն» ՀԿ իրավաբան Գևորգ Հայրապետյանը տեղեկություն ստանալու հարցում է ուղղել ՀՀ ճանապարհային ոստիկանության պետին։

Նշված հարցումը, ինչպես հիմնավորվեց դատաքննությամբ, Պատասխանողը ստացել է 25.05.2015 թվականին։

Միայն 24.06.2015 թվականին «Ինֆորմացիայի ազտության կենտրոն» ՀԿ իրավաբան Գևորգ Հայրապետյանին ուղղված պատասխան գրությամբ ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության պետի պաշտոնակատար Ե. Կարապետյանը պատասխանել է դեռևս 22.05.2015 թվականին իրենց հասցեագրված հարցմանը։

Նշվածից ելնելով Դատարանը արձանագրում է, որ Պատասխանողի կողմից խախտվել է Հարցման պատասխանը «Տեղեկատվության ազտության մասին» ՀՀ օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում դիմողին տրամադրելը։ Փաստորեն տեղեկատվությունը տրամադրվել է, սակայն օրենքով սահմանված ժամկետից ուշ։

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «3. Ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ոչ իրավաչափ ճանաչել այլևս իրավաբանական ուժ չունեցող միջամտող վարչական ակտը կամ կատարմամբ կամ որևէ այլ կերպ իրեն սպառած գործողությունը կամ անգործությունը, եթե հայցվորն արդարացիորեն շահագրգռված է ակտը կամ գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու մեջ, այսինքն՝

1) առկա է նմանատիպ իրավիճակում նմանատիպ միջամտող վարչական ակտ կրկին ընդունելու կամ գործողություն կրկին կատարելու վտանգ.
2) հայցվորը մտադիր է պահանջել գույքային վնասի հատուցում, կամ
3) դա նպատակ է հետապնդում վերականգնելու հայցվորի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը։»։

Ելնելով ամբողջ վերոգրյալից Դատարանը գտնում է, որ ոչ իրավաչափ է ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության օրենքով սահմանված ժամկետում Հայցվորի հարցման չպատասխանելուն ուղղված անգործությունը։

Այսպիսով Դատարանը գտնում է, որ ներկայացված հայցը հիմնավոր է և ենթակա է բավարարման։

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի կարգով լուծելով դատական ծախսերի բաշխման հարցը և նկատի ունենալով, որ 06.07.2015 թվականին Դատարանը որոշում է կայացրել պետական տուրքի վճարման ժամկետը հետաձգելու վերաբերյալ, իսկ հայցը ենթակա է բավարարման, գտնում է, որ Պատասխանողից հօգուտ ՀՀ պետական բյուջեի պետք է բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես չվճարված պետական տուրքի գումար։

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ, 114-րդ, 123-127-րդ, 132-րդ հոդվածներով, Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցը բավարարել.
Ոչ իրավաչափ ճանաչել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության 22.05.2015 թվականի հարցմանը օրենքով սահմանված ժամկետում չպատասխանելուն ուղղված ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության անգործությունը։

2. ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից հօգուտ ՀՀ պետական բյուջեի բռնագանձել 4.000 ՀՀ դրամ՝ որպես նախապես չվճարված պետական տուրքի գումար։

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական վերաքննիչ դատարան։ Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով պարտապանի հաշվին։

ԴԱՏԱՎՈՐ՝ ԱՐՄԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ